

Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՎԻՃԱԿԱԳԻՐ Ա-ԴՈՅԻ ՀՈՒՇԵՐԸ

Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) համարվում է հայ առաջին արհեստավարժ վիճակագիրը: Նրա թողած հսկայական պատմագիտական, քաղաքագիտական, վիճակագրական, օրագրային, հրապարակախոսական և հուշագրական ժառանգությունն ունի աղբյուրագիտական մեծ արժեք, ինչը կարող է ոչ միայն սրբագրումներ մտցնել պատմական դեպքերի և դեմքերի մասին մինչ այժմ եղած պատկերացումներում ու հայ գրականության պատմության ընկալումներում, այլև երբեմն դրանց լուրջ խմբագրումների հիմք դառնալ:

Առանցքային բաներ. Ա-Դո, հուշագրություն, հայ-ռուսական, հայ-թաթարական:

Ներածություն: Ա-Դոյի (1867-1954) գրավոր ծավալուն ժառանգությանը հայ իրականության մեջ կրկին անդրադարձ եղավ միայն խորհրդային կայսրության փլուզումից հետո, մինչդեռ մինչև Հայաստանի խորհրդայնացումը նա տպագրել է հարյուրավոր հոդվածներ և լույս ընծայել մեկ տասնյակ գիրք, որոնցից մեկի համար անգամ բանտարկվել է ռուսական իշխանությունների կողմից: Նրա այդ հրատարակումներից զգուշորեն են օգտվել խորհրդահայ պատմաբանները, քանի որ եղել է դաշնակցական գործիչ, ավելին՝ նրա հարազատ եղբայրը՝ Միքայել Տեր-Մարտիրոսյանը, դաշնակցական այն 31 զինյալներից էր, ովքեր 1896թ. օգոստոսի 14-ին գրավեցին Օսմանյան կենտրոնական բանկը: 1915թ. հուլիսի 18-ի կեսօրին [1,86], երբ Արամ Մանուկյանը թախանձագին խնդրանքով նամակով դիմում էր դավաճանաբար նահանջել որոշած ռուսական բանակի հրամանատար Նիկոլակին, որպեսզի հեռանալիս՝ «1. Մեզ թողնել բավական ռազմամթերք, 2. Մեզ թողնել այն զենքը, որ դուք հնարավորություն չպիտի ունենաք տեղափոխելու, 3. Ձեր մթերանոցները, որոնք փոխադրելու հնարավորություն չունենաք, չփչացնեք» [2,32-36], սակայն ռուսները դա մերժեցին ու 10 օր անց թողեցին Վանը, հենց Ա-Դոյին է վստահում Վանի նահանգի (այդ թվում՝ Աղթամարի) ձեռագիր հսկայական ժառանգությունը սայլերով էջմիածին տեղափոխելու հանձնարարությունը [3,609]: Հետազոտության առանձին նյութ է, թե ինչպես է կարողացել Ա-Դոն Հայաստանի խորհրդայնացումից հետո հազարավորների պես չոչնչացվել 1920 դեկտեմբերից մինչև Ստալինի մահն ընկած կոմունիստական ռեպրեսիաների ընթացքում:

Ա-Դոյի անխտիր բոլոր գործերն ունեն աղբյուրագիտական արժեք, արժեքավոր տեղեկություններ և վերլուծություններ են պարունակում ժամանակի հայ կյանքի գրեթե բոլոր ոլորտների մասին:

Ա-Դոյի հուշագրական երկերի առանձնահատկությունները: Ա-Դոյի «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով)», «Ռուսական ցարերը և Հայկական հարցը», «Հուշեր Տաճկահայաստանի ճանապարհորդությունից», «Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին», «Իմ հիշողությունները» և այլ աշխատություններ իրենց ժանրային պատկանելությամբ մեմուարներ են կամ սահմանակցում են այդ ժանրին: Հուշագրության արտահայտիչ հենք ունեն նրա գրեթե բոլոր գործերը: Հատկապես «Իմ հիշողությունները», որ շարադրել է 1940-ականներին, թեև ինչպես վայել է ամբողջական հուշագրությանը, սկսվում է մանկությամբ, *քաղաքական հուշագրություն է՝* զարմանալիորեն չտրված կոմունիստական գաղափարախոսականացվածությանն ու ստանդարտներին:

Լինելով վիճակագիր՝ Ա-Դոն բժախնդրությամբ, տարբեր աղբյուրների համեմատությամբ է բերում իր խոսքը, ավելին՝ չի զլանում աղյուսակների տեսքով ներկայացնել թվական տվյալներ, ինչն առանձնահատուկ է դարձնում նրա հուշագրությունը՝ մոտեցնելով գիտական հետազոտության և վիճակագրության սահմաններին: Մասնագիտության կնիքը զգալի է: Նրա հուշագրություններում որպես աղբյուր են ծառայում՝ ա) ականատեսի սեփական վկայությունները, բ) այլ ականատեսների բանավոր վկայությունները, գ) պաշտոնական և համայնքային գրավոր տեղեկատվությունը: Հուշագրող Ա-Դոյի մոտեցումը գիտական է՝ ա) նեկայացնում է երևույթի մասին իրեն հասու ամբողջ տեղեկությամբ, բ) համադրում է տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունները, գ) կատարում է համեմատություններ ու համադրումներ, դ) անպայման ավարտում է տրամաբանական եզրակացությամբ: Այս շղթայի հերթականությունը նրա հուշագրությունը դարձնում է առավել տրամաբանական և հիմնավոր: Գրեթե միշտ, բացի տրամաբանական եզրակացությունից, հայտնում է նաև իր *հուզական* մոտեցումը, որն էլ *քաղաքացիականություն* և որոշ *գեղարվեստականություն* է հաղորդում հուշագրությանը:

Նյութը շարադրելիս նա օգտագործում է իր հուշատետրերի գրառումները, ինչը թույլ չի տալիս, որ ժամանակը դա խամրեցնի, իսկ հետագա փորձառությունը՝ սրբագրի բուն եղելությունն ու փաստը: 1905-1906թթ. հայ-թուրքական կովկասյան ընդհարումների օրերից կիրառած այս միջոցին հետագայում՝ Ադանայի ջարդերի և Մեծ եղեռնի պարագայում, դիմեցին Չ. Եսայանը, Վ. Տերյանը և այլք:

Ա-Դոյի «Իմ հիշողությունները» շատ նման է Լեոյի «Անցյալից»-ին. ազդեցությունն ակնհայտ է: Հաճախ պատմում է պատմական իրադարձությունների մասին, վերլուծում դրանք, որով գործը թողնում է պատմության դասագրքի կամ պատմագիտական աշխատանքի տպավորություն: Որպես գիտնական-հուշագրող

բազում տեղերում ինչ-որ օրինաչափություն արձանագրելիս ասում է, որ փաստերը շատ են, բայց ինքը կբերի որպես օրինակ մեկ-երկու դեպք՝ տիպականը, բնորոշը [4,258]:

Կան հուշագրությանը հատուկ դիմանկարներ (եպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյան, Վանի օկրուգի կոմիսար Կոստանդին Համբարձումյան և այլք), իսկ Ռաֆֆու հայրենի գյուղի մասին հատվածը կարող է նպաստավոր լինել ռաֆֆիագիտության համար:

Դարասկզբի Երևանի մշակութային և կրթական կյանքի, սոցիալական և ազգամիջյան հարաբերությունների մասին ամենից արժեքավոր հուշագրություններից է. այդպիսիք ունենք Բաքվի և մանավանդ Թիֆլիսի մասին, բայց Երևանի մասին սա եզակի ծավալուն շտեմարան է: Առավել ևս եզակի է հայ գավառի՝ իր ծննդավայր Նոր Բայազետի պարագայում:

Ժամանակագրական հստակ կարգով շարադրելով իր հուշերը՝ հատկապես կենտրոնանում է հայ-թուրքական ընդհարումների, հայ-քրդական հարաբերությունների, ռուսական հայահալած ու խորամանակ քաղաքականության աղետաբերության, Վանի ինքնապաշտպանության և գաղթի, Սարդարապատի հերոսամարտի վրա: Եվ այս հանգամանքը՝ կարևորագույն և բախտորոշ իրադարձությունների մանրամասների առաջնահերթությունների շեշտադրումը, շահեկանորեն առանձնացնում է գիտնական Ա-Դոյի հուշագրությունը նույն պատմաշրջանի մասին գրված այլ հուշագրություններից:

Ա-Դոյի հուշագրության լեզուն, անշուշտ, օրինաչափորեն զիջում է Շիրվանզադե կամ Եսայան հուշագրողների գեղարվեստորեն բյուրեղացած լեզվին: Նրա լեզուն առավել վիճակագրի, պատմաբանի և հրապարակախոսի լեզու է՝ բավականին մերձ Լեոյի հուշագրությունների լեզվին: Լեզվի պարագայում ևս կա մեկ առանձնահատկություն. Ա-Դոն, ի տարբերություն ոչ գրող հուշագիրների, *չի ճգնում* գեղարվեստականացնել իր խոսքը, ինչը թեև ընթերցանության տեսանկյունից ի վնաս իրեն է, սակայն այդ անկեղծ մոտեցումն ընթերցողի ընկալման մեջ ապահովում է պատումի հավաստիության հանդեպ առավել մեծ վստահություն:

Ա-Դոյի հուշագրությունների արդիականությունը: Այսօր, երբ գոյաբանականի հասնող սրությամբ դրված են հայ-ռուսական և հայ-թուրքական հարաբերությունների հարցերը, Ա-Դոյի հուշագրության թե՛ տեղեկատվական պաշարը, թե՛ եզրակացությունները պատմական դասի և ուղղորդման արժեք ունեն:

«Ռուսական ցարերը և Հայկական հարցը» աշխատության մեջ Ա-Դոն գրում է. ««Մեզ հարկավոր է Հայաստանն առանց հայերի» - ցինիկ, զագիր մի դարձվածք, որ ծնունդ առավ Պետերբուրգում և որը վավերացվեց ցարական

դիվանագետ Լոբանով-Ռոստովսկու միջոցով և իրականացավ սուլթան Համիդի ձեռքով» [5,101]: Մեկ այլ տեղում՝ «Ցարիզմ-սուլթանիզմ՝ մի համերաշխ դաշինք, որի սլաքներն ուղղված էին հայերի դեմ» [5,135]: Ռուսական տարածաշրջանային այս քաղաքականությանը նա անդրադառնում է բազում էջերում: Մասնավորապես, սահմուկեցուցիչ է, երբ հուշագրողը պատմում է, թե ինչպես ռուսական բանակը կանգ առավ Վան չհասած, երբ իր առջև խոչընդոտ չկար, իսկ Վանում նահանգի բնակչությունը օրհասական ինքնապաշտպանության մեջ սպառվում էր: «1915 թվի կեսերին, երբ սուլթան Համիդի հավատարիմ հետևորդ երիտթուրքերի ծրագրով վեց նահանգների մեկուկես միլիոն հայությունը խողխողվում էր զանգվածային ջարդերում և քշվում էր Միջագետքի ավազուտները բնաջնջվելու, այդ նույն միջոցին Վասպուրականի հարյուր հազարից ավելի հայ ժողովուրդը, որը հերոսական դիմադրության շնորհիվ կարողացել էր իր գոյությունը փրկել Վան քաղաքում և Շատախի լեռներում ու ստեղծել էր կառավարական մարմին, ցարական բանակի հրամանատարի վերից թելադրված մեկ հրամանով տեղահան եղավ և քշվեց Արարատյան կիզիչ դաշտերում գերեզման գտնելու: Իսկ դրանից ընդամենը 10 օր անց նույն բանակը, որը նահանջել էր հայ ժողովրդի հետ միասին, վերադարձավ և վերագրավեց Վասպուրականն առանց դիմադրության, նաև առանց հայերի» [5,146-147],- գրում է Ա-Դոն:

Այն ընթացքում, երբ Հայաստանը հայերից սեփական կամ թուրքերի ձեռքով դատարկելու ակներև պատրվակ գտնելն անհնարին էր, ռուսական քաղաքականությունը գործում էր հոգևոր Հայաստանի դեմ՝ փակելով հայ ինքնության գերագույն երաշխիքը՝ հայկական դպրոցները: Ռուսաստանը հայկական նույնիսկ ծխական դպրոցները փակեց երեք անգամ՝ 1885թ. մարտի 13-ի, 1898թ. մարտի 26-ի և 1903թ. հունիսի 12-ի հրամանագրերով: Վերջին հրամանագրով բռնագրավվեցին նաև Հայ եկեղեցու գույքն ու կալվածքները: Ա-Դոն որպես ականատես վկայում է. «Ոստիկանական խմբերը խուժեցին դպրոցներն ու դասարանները դասավանդման ժամերին, դուրս քշեցին ուսուցիչներին և աշակերտությանը» [5,102]: ...Երևանի գիմնազիայում «աշակերտի բերանից հայերեն խոսք չպետք է լսվեր: Ուսուցչի նկատմամբ պահանջվում էր լուռ հնազանդություն, ազգանվան «յանց» վերջավորությունը ծաղրվում էր և արգելվում էր գործածել: ...Աշակերտի երեսին շարտում էին «արմյաշկա» լաիրշ, վիրավորական արտահայտությունը...» [5,27]: Չնայած սրան՝ «Ամէն անգամ, երբ ծագում էր ռուս-պարսկական և ռուս-տաճկական պատերազմ, հայերը իրենց բոլոր աջակցութիւնն էին տրամադրում ռուսներին, ոչ միայն երկրի ճանապարհները ցոյց տալով, թշնամու դրութեան մասին տեղեկութիւններ հաղորդելով, ռուսական բանակին խաչ ու խաչվառով դիմաւորելով և յաճախ նրանց պաշար հայթայթելով, այլ և կամաւորական

խմբեր կազմելով ու ռուսական զորքերի առաջապահ շարքերը գրաւելով» [6,85]:

Հոգևոր Հայաստանի դեմ ռուսական սպանդի դեմ հայերը դուրս եկան ոչ միայն իրենց զավակներին ռուսական դպրոցներ չտանելով և իրենց տներում ընդհատակյա հայկական ուսուցում կազմակերպելով, այլև Երևանում, Վաղարշապատում, Արտաշատում, Իգդիրում, Գանձակում, Շուշիում և այլուր ցույցեր ու երթեր անելով: Ա-Դոն դրա հետ է կապում ամբողջ Կովկասում ռուսների կողմից հայ-թուրքական ընդհարումներ հրահրելը, այլապես՝ «Մինչ այդ Երևանի հայ և թուրք ժողովուրդների մեջ գոյություն ունեւ խաղաղ դրացիական հարաբերություն» [5,30]:

«Այդ իրադարձություններն [1905-1906թթ. կոտորածները] իրենց թողած հետևանքներով ու դրդիչ հանգամանքներով այնքան վրդովեցուցիչ են, որ մոռացության տալ անկարելի է և պետք է դարձնել այն պատմական փաստաթուղթ... ...Ձեռնարկելով հայ-թուրքական ընդհարումների գրանցմանը, նախ ձեռքիս տակ ունեւ կուտակված նյութեր Երևանում կատարված դեպքերի մասին, դեպքեր, որոնց ես ականատես էի և որոնց մասին իր ժամանակին օր-օրին ես ուղարկում էի հաղորդումներ և որոնք տպագրվում էին «Մշակի» առաջին երեսներում, մեծ-մեծ տառերով՝ հեռագրային հաղորդումների հետ միասին: Ծանապարհորդել էի նախկին Սուրմալուի գավառում 1905թ. մայիսին, Շարուրի և Նախիջևանի գավառներում՝ նույն 1905թ. հուլիսին, որ տեղերում տեղի էին ունեցել սոսկալի ջարդեր, կողոպուտներ և ավերածություններ, տեղնուտեղը հավաքելով անհրաժեշտ նյութեր» [4,112],- գրում է Ա-Դոն: Ավելին՝ «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում» վավերագրքի մեջ նա գյուղ առ գյուղ ցուցակներ է զետեղում, ուր հստակ նշվում են ոչ միայն մարդկային կորուստները, այլև ընտանի կենդանիների հափշտակումների չափը [7,104-105 նն]:

Հետաքրքիր է, որ շատ հուշագրողներ գրում են, որ արևելահայ գյուղացիությունը շատ վատ էր վերաբերվում գաղթականությանը. բռնաբարություններ էին, սովամահություն, ստրկական աշխատանք, սակայն Ա-Դոն ունի այսպիսի վկայություն. «Այդ հոգեմաշ ապրումների ֆոնի վրա առկայծում էր հուսատու մի ցուք՝ այդ ցուքը վեց օրերի ընթացքում իմ տեսած Մարգարա գյուղի գյուղացիության ցուցաբերած գիտակցությունն ու կարեկցությունն էր՝ հանդեպ աղետների ենթակա իր ցեղակիցների: ...Ես տեսա այդ բոլորը մեկ հայ գյուղի միջավայրում ու սփոփանք էի գտնում իմ ծանր ապրումների աշխարհում: Հայ գյուղացին, որը կրել էր շատ հալածանքներ ու ճնշումներ, այնուամենայնիվ պահպանվել է նրա մեջ կարեկցությունը դեպի տանջված մարդը, ահա այն մեծությունը, որ ունի հայ գյուղը... Եվ ես առաջին անգամ ապրեցի հուզմունք և իմ բիրբերում զգացի հուզմունքի շիթեր՝ շիթեր և՛ վշտի, և՛ ուրախության Մար-

գարայում: Իսկ երկրորդ անգամ այստեղ՝ Բերկրի ավանում» [4.208, 231-232]:

Այսօրեական են նաև Ա-Դոյի վկայությունները քրդերի էթնիկ հոգեբանության, հայ-քրդական հարաբերությունների, նույնիսկ իրենց շահից ելնելով՝ քրդերի ինքնական հայանալու մասին [4.229, 311-315]: Նույնն է նաև հայ-վրացական պատերազմի, վրացական մոտեցումների [4.438-456] պարագայում: Այն, ինչ վկայում է Ա-Դոն Սարդարապատի ճակատամարտի ընթացքում հայ ժողովրդի վարքի մասին, ներկա սերունդն ականատես եղավ 44-օրյա պատերազմում, և անպայման է դա պետական գալիք ռազմավարությունը որոշելիս. «Ժողովրդական շարժումը, որ տեղի ունեցավ Երևանում և այդտեղից էլ ծավալվեց անմիջապես շրջակա գյուղերն ու գավառամասերը, առաջ բերեց դասալիք զինվորների ու կամավորների այնպիսի հոսանք դեպի ճակատները, որ կարիք զգացվեց սահմանափակել այդ հոսանքը... ...Չորքին հաց պիտի հասցնել. և գիշերվա ժամը 11-ին փողոց են դուրս գալիս մարդիկ, բախում են արդեն փակված դռները, բացվում են դռները, հայտնվում են մեծ ու փոքր: Սկսվում է հուզիչ տեսարան, բերում տալիս են հաց ամենքը՝ չեն խնայում ոչինչ, տալիս են տանու հաց, շուկայից գնում հաց, նաև քաղաքի փռերից ձեռք բերած չնչին չափաբաժինները, տալիս են նույնիսկ երեխաների համար խնայված հացերը: Մեկ ժամվա ընթացքում կուտակվում է ահագին քանակությամբ հաց, արագ դարսում են սայլերի ու ֆուրգոնների վրա հացը և քշում են երկաթուղու կայարանը Սարդարապատ ուղարկելու համար... Մայիսի 24-ն է: Ազգային խորհուրդը քաղաքի, հիմնարկությունների պաշտպանության, փողոցներում և շուկաներում կարգապահելու համար հասակավորների հավաք է հայտարարել: Շատ չի անցնում և ահա քաղաքի գիմնազիայի դեռևս չավարտված հսկա շենք են գալիս կուտակվում պարտքի լայն գիտակցությամբ հարուստ ու աղքատ, պաշտոնյա ու բանվոր, առևտրական և արհեստավոր: Դրանցից զատում են 1200 հոգի, անվանում են Երևանի պաշտպանության գումարտակ ու հանձնում քաղաքի պարետին՝ վարժեցնելու, դասավորելու ու ծառայեցնելու ըստ պահանջի: Ոչ ոք չի հրաժարվում և չի խուսափում...» [4.397-403]:

Ա-Դոն արհեստավարժորեն առանձնացրել և անդրադարձել է այն առաջնահերթություններին, որոնք երկարատև մարտահրավերի արժեք ունեն: Դրանք արդիական են այսօր և այդպիսին են լինելու առնվազն մոտ ապագայում:

Եզրակացություն: Ա-Դոյի գրական ժառանգությունը, որ հուշագրական ատաղձ ունի, առանձնանում է նախ այն բանով, որ գրվել է Խորհրդային Հայաստանում և ամենադժնդակ ռեպրեսիաների ժամանակ: Մասնավորապես, «Իմ հիշողությունները» հուշագրությունն առայժմ հայտնի միակ գործն է այդ ժանրում, որ գրվել է 1940-ականներին: Ա-Դոն տուրք չի տալիս կոմունիստա-

կան գաղափարախոսական և գրաքննչական կաղապարներին և շարադրում է անաչառ գիտնականի և հայրենասեր քաղաքացու դիրքերից: Քաղաքական եզրակացությունը հետևյալն է. եթե ռուսական պետական շահը պահանջում էր «Հայաստանն առանց հայերի», և ռուսներն այն դիվանագիտորեն իրականացնում էին Թուրքիայի միջոցով, ապա Թուրքիան դա անում էր հիմնականում մեկ այլ ազգային փոքրամասնության՝ քրդերի ձեռամբ: Ա-Դոյի հուշերն արդիական են և կարող են խմբագրումներ ու սրբագրումներ մտցնել հայ պատմագիտական և բանասիրական ցայժմ եղած մոտեցումների, որոշ պատմական և գրական դեմքերի և կարևոր դեպքերի գնահատումների մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Սարհաղեան Ս.**, Կեանքիս յուշերից, Եր., Գիտություն, 2007, 304 էջ:
2. Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., ԲՀա, 2007, N 1-2 (109-110):
3. Հովիտ, Թիֆլիս, թիվ 39, 11 հոկտեմբեր, 1915:
4. **Ա-Դո**, Իմ հիշողությունները, Եր., ՄՆ, 2015, 507 էջ:
5. **Ա-Դո**, Ռուսական ցարերը և Հայկական հարցը, Եր., ԳԱԱ, 2013, 161 էջ:
6. **Ա-Դո**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, Եր., Լոյս, 1917, 488 էջ:
7. **Ա-Դո**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով), Եր., 1907, 464 էջ:

М.Г. АЙРАПЕТЯН

МЕМУАРЫ ПЕРВОГО АРМЯНСКОГО СТАТИСТИКА А-ДО

А-До (Ованес Тер-Мартirosян) считается первым армянским профессиональным статистиком. Оставленное им огромное историческое, политологическое, статистическое, дневниковое, публицистическое и мемуарное наследие имеет большую источниковедческую ценность, что может не только вносить коррективы в существовавшие до сих пор представления об исторических событиях и личностях и понимание истории армянской литературы, но и стать порой основой для серьезных поправок.

Ключевые слова: А-До, мемуаристика, армяно-русский, армяно-татарский.

M.H. HAYRAPETYAN

MEMOIRS OF THE FIRST ARMENIAN STATISTICIAN A-DO

A-Do (Hovhannes Ter-Martirosyan) is considered the first Armenian professional statistician. The enormous historical, political, statistical, diary, publicistic and memoiristic legacy he left behind is of great source study value, which can bring not only corrections to the knowledge of historical events and persons, as well as the perceptions of the history of the Armenian literature, but also sometimes become the basis for serious edits.

Keywords: A-Do, memoiristics, Armenian-Russian, Armenian-Tatar.